



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ներառական կրթության
իրականացման հոգեբանական առանձնահատկությունները
միջին դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Ենոքյան
Արևիկի միջնակարգ դպրոց

Մենթորուսուցիչ՝ Նարինե Վասիլյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն -----	3
2. Հասկացություն ներառական կրթության մասին -----	6
3. Միջին դասարաններում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի իրականացման հեռանկարներ -----	10
4. Եզրակացություն -----	17
5. Գրականության ցանկ -----	18



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ներկա ժամանակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների զարգացմանն ու կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը:

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածությանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Սակայն պետք է փաստել այն, որ ներառական կրթությունը ոչ միանշանակ է ընդունվում բոլորի կողմից: Այսօր հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ շատ կարծրատիպեր կոտրվել են, սակայն երբ մարդիկ պետք է իրենց խոսքը գործով ապացուցեն այդտեղ նկատվում է որոշակի բաց: Շատերն են ասում, որ հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, սովորի դպրոցում, բայց դեմ են, որ իրենց երեխայի հետ սովորի նույն դասարանում: Նման գաղափարի տեր ծնողները իրենց երեխաներին առանձնացնում են հաշմանդամություն ունեցող երեխաներից և ցույց տալիս իրենց խտրական վերաբերմունքը: Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքներն, ինչպես մյուսները:

Հատուկ պայմանների կարիքներ ունեցող են համարվում այն դպրոցական երեխաները, ովքեր ունեն երկարատև խնամքի, բուժման, վերականգնման կարիք, որոնք պահանջում են լիարժեք, բազմակողմանի և ծրագրային մոտեցում: Հատուկ կարիքներով երեխաները նրանք են, ովքեր ունեն հոգեբանական, ֆիզիկական, մտավոր կամ վարքային խնդիրներ:

Ամբողջ աշխարհում ներառումը այլևս ապրելակերպ է, մարդկանց համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ: Յուրաքանչյուր երեխա իրեն պետք է կարևորված զգա հասարակությունում:



Հայաստանում ներառական կրթությունը, լինելով կրթության երիտասարդ համակարգ, դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի: Եվ հենց այդ խնդիրներն են աշխատանքի թեման դարձնում ավելի ակտուալ: Կան մի շարք բացթողումներ ինչպես նախադպրոցական, այնպես էլ դպրոցական ներառական կրթության համակարգում և դա նպաստում է աշխատանքի մեջ լինել նպատակային և համակարգված:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է, բացահայտել ներառական կրթության հոգեբանական նախապայմաններն ու առանձնահատկությունները միջին դասարաններում:

Հետազոտության օբյեկտը: Միջին դասարանները ներառական կրթության համակարգում:

Հետազոտության առարկան: Ներառական կրթության առանձնահատկությունները միջին դասարաններում:

Վարկած: Ենթադրվում է, որ միջին դասարաններում արդյունավետ ներառում կազմակերպելու համար անհրաժեշտ են համարվում ծնողի և մանկավարժական անձնակազմի անձնային և մասնագիտական պատրաստվածության մակարդակը և կազմակերպության անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության մեջ առաջ են քաշվել նպատակից և վարկածից բխող հետևյալ խնդիրները՝

- Տեսամեթոդական վերլուծությամբ ընդհանրացնել ներառական կրթության հոգեբանական առանձնահատկությունները:
- Հետազոտության միջոցով վերհանել ներառական կրթության իրականացման հոգեբանական պայմանների նշանակությունը միջին դասարաններում:
- Համակարգել և ներկայացնել միջին դասարաններում հոգեբանական հիմնական պայմանները, մասնագիտական պատրաստվածության մակարդակը ներառական կրթության դժվարությունների կանխարգելման մասին:



- ԿԱՊԿՈՒ երեխաների ներառական կրթությունը ապահովելու նպատակով մշակել և նախապատրաստել պատեհաժամ մեթոդիկաներ:

Հետազոտության մեթոդները:

- Դիտում
- Հոգեբանական հարցում
- Փորձագիտական գնահատում
- Հարցազրույց



ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխարհում ապրում են միլիարդավոր մարդիկ, ովքեր ունեն սովելու, կրթություն ստանալու, զարգանալու և այլ պահանջմունքներ: Սկսած մանկության շրջանից՝ անձի զարգացման համար կարևոր է համարվում կրթության և դասիրակության ճիշտ կազմակերպումը:

Կան բազմաթիվ մեթոդներ, ուղիներ, ծրագրեր կրթությունը ավելի նպատակահարմար դարձնելու համար: Մակայն ցանկացած պետության համար առաջնային է հատուկ կարիքներով երեխաների կրթության կազմակերպումը, քանի որ նրանք ևս ունեն հավասար իրավունքներ:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթության գլխավոր գաղափարախոսությունն այն է, որ բոլոր երեխաները անկախ ֆիզիկական, հոգեկան մտավոր և զարգացման այլ առանձնահատկություններից, անպայման պետք է իրենց հասակակիցների հետ ներառվեն կրթության և դաստիարակության համակարգ: Ներառումը բազմակողմանի գործընթաց է: Այն արտացոլում է սոցիալական, իրավական, տնտեսական, հոգեբանական և մանակվարժական հիմնախնդիրների համադրություն: Ներառական կրթության իրականացման ինչպես նաև, կառավարման գործընթացը հանդիսանում է ինչպես զարգացած, այնպես էլ՝ զարգացող երկրների սոցիալական և կրթական քաղաքականության զարգացման առաջին ուղղություններից: Համաձայն արտասահմանյան հետազոտողների՝ ներառման ճիշտ ընթացքը կախված է՝ մի շարք հանգամանքներից մանկավարժական և հոգեբանական ռեսուրսների համակարգված կիրառումից, որի մեջ մտնում է ներառական համակարգում մանկավարժների մասնագիտական իրազեկվածությունը, մանկավարժական կադրերի մասնագիտական



վերապատրաստման գործընթացի իրականացումը, մանկավարժների վերաբերմունքը «հաշմանդամություն» երևույթին:

Ժամանակակից հետազոտողները փաստում են, որ ներառական կրթությունը բարձր մակարդակի վրա է գտնվում այնպիսի եվրոպական երկրներում, ինչպիսիք են Անգլիան, Բելգիան, Դանիան, ԱՄՆ-ն, Իսրայելը. այս երկրներում ներառական կրթությունը գործում է շուրջ 40 տարի: Օրինակ՝ ԱՄՆ-ում ԿԱՊԿՈԻ երեխաների ուսուցումը իրականացվում է հետևյալ կերպ՝ այստեղ միաձուլվում են հանրակրթական և հատուկ կրթության համակարգերը: Առաջարկվում է այս միաձուլմանը նպաստող 3 մոտեցում. «հիմնական ուղղություն», «մասայական կրթության նախաձեռնություն», «ներառում»:

«Հիմնական ուղղությունը» ենթադրում է հատուկ կրթական կարիքներով երեխաների տեղավորում հանրակրթական դպրոցների դասարաններում: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այդ երեխաները հայտնվում են հասարակության մեջ, նրանց հարկավոր է ուղղարկել դպրոց, որպեսզի հետագայում առանց դժվարությունների ներառվեն սոցիալական և ուսումնական գործունեության մեջ:

«Մասայական կրթության նախաձեռնություն» ՄԿ-ն ավելի առաջ է անցնում, քան «հիմնական ուղղության» հայեցակարգը՝ առաջարկելով հատուկ կարիքներով երեխաների կրթական պայմանների հիմնարար փոփոխություններ: Իսկ «Ներառման» մոդելի համաձայն՝ անկախ արատի տիպից և արտահայտման խորությունից, հանրակրթական գործընթացի մեջ՝ ըստ բնակության վայրի, պիտի ներգրավվեն բոլոր երեխաները: Այսպիսի յուրաքանչյուր երեխայի համար մասնագետների խմբի կողմից ստեղծվում են, անհատական ուսումնական ծրագրեր, որոնց համապատասխան էլ գնահատվում է յուրաքանչյուր սովորողի առաջընթացը:

Ներկայումս ԱՄՆ – ում գործում է 1990 թվականին ընդունված օրենքը, որը կոչվում է «Ակտ զարգացման շեղումներով երեխաների մասին»: Այն երաշխավորում է հանրակրթության համակարգում երեխայի կարիքներին համապատասխանող անվճար կրթություն: Օրենքը երեխային իրավունք է տալիս ստանալու ոչ միայն



հատուկ կրթություն, այլ նաև լրացուցիչ ծառայություններ (երթևեկության միջոց, հոգեբանի օգնություն և այլն):

ՄԱԿ-ի և ՀԱԿ (համաշխարհային առողջապահական կազմակերպության) փորձագետների կարծիքով հատուկ կարիքներով անձինք կազմում են երկրի բնակչության 10%-ը, (մոտավորապես 500 մլն մարդ), որոնցից ավելի քան 150 մլն-ը երեխաներ և դեռահասներ են: Ըստ այդ տվյալների, ամբողջ աշխարհում նկատվում է հատուկ կարիքներով, հաշմանդամների թվի աճ, որը լուրջ սպառնալիք է ազգային անվտանգությանը և պահանջում է հասարակական և բժշկա-հոգեբանական ռեսուրսների մեծ քանակ

Այս մարդիկ ունեն մի շարք սահմանափակումներ ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական և այս ամենը նրանց մեկուսացնում է հասարակությունից՝ չթողնելով վարել ակտիվ հասարակական կյանք: Շատ կարևոր է նաև հասարակության վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Իրավիճակը կարող է փոխել այն գիտակցումը, որ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ անկախ ֆիզիկական, մտավոր և հոգեկան խնդիրներ ունենալուց: Հենց սա է ներառական կրթություն ծրագրի գաղափարախոսությունը: Հատուկ պայմանների կարիք ունեցող երեխային հասարակության մեջ ներառելու համար կարևոր է տարբերակել նրա ունեցած խնդիրը և դրանց տարբերությունները: Համաշխարհային առողջապահության կազմակերպության կողմից առաջարկվել է հետևյալ դասակարգումը՝

1. Ախտահարում,
2. Անկարողություն,
3. Հաշմանդամություն:

Իսկ այժմ պատկերացում տանք յուրաքանչյուր դասակարգման վերաբերյալ. Ախտահարում՝ որևէ օրգան - համակարգի գործառույթի խանգարում, կամ բացակայություն ինչ-որ ազդակի ազդեցության հետևանքով, որը կարող է ունենալ հոգեբանական դրսևորում, ինչպես անձի, այնպես էլ միջավայրի կողմից անձի նկատմամբ: Անկարողություն՝ որևէ օրգան - համակարգի ֆունկցիայի



սահմանափակում, կամ բացակայություն, որը կրում է կայուն բնույթ: Այս դեպքում հոգեբանական դրսևորումները ավելի ակնառու են և բուռն: Հաշմանդամություն՝ հանրությունից մեկուսացված անձնավորություն, որը ունի որևէ օրգան-համակարգի գործառույթի կայուն սահմանափակում, կամ բացակայություն, իր բոլոր հոգեբանական դրսևորումներով:

Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը կազմում է ներառական կրթության առանցքը, քանի որ այն ենթադրում է՝

- բոլոր երեխաների կրթական կարիքների գնահատման հավասար մոտեցում,
- դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին բոլոր երեխաների ներգրավվածության աստիճանի բարձրացում,
- կրթական քաղաքականության վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին, դպրոցական պայմանների բարելավում,
- ուսումնական գործընթացներում առկա խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում,
- երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,
- սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և հարգանք,
- կրթությունը որպես հասարակության մեջ բոլոր մարդկանց լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Ներառական կրթության համընդհանուր գաղափար ստեղծելիս և ներմուծելիս հարկավոր է հաշվի առնել տվյալ հասարակության առանձնահատկությունները: Յուրաքանչյուր հանրություն պետք է մշակի և իրագործի սեփական գաղափարները: Ներառումն ավելի արդյունավետ կազմակերպելու համար մասնագետները պետք է հատուկ կարիքներով երեխային դիտարկեն ոչ այն տեսանկյունից, թե նա ինչ չի



կարող անել իր կարիքների պատճառով, այլ այն կողմից, թե նա ինչ կանի անկախ իր կարիքից:

Այսպիսով՝ ծրագրի իրականացումը նպաստում է հասարակության և ԿԱՊԿՈՒ երեխաների բարենպաստ հարբերություններին: Հիմք է դրվում, հավասարը հավասարի հետ քայլելու գաղափարին: ԿԱՊԿՈՒ երեխան իրեն զգում է արժևորված և հասարակության լիիրավ անդամ:



Միջին դասարաններում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի իրականացման հեռանկարներ

Ի՞նչ ՊԵՍ ՊԵՏՔ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՇԽԱՏԵՆ ԿԱՊԿՈՒ (ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ) ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ

Ուսուցիչների հետ կապված խնդիրը բարդ է և բազմաշերտ. Սա մի կողմից մասնագիտացված գործունեություն է: Մյուս կողմից ուսուցիչը ստանում է մի խնդիր, որը կատարել պատրաստ չէ: Նա գիտելիքի, պատրաստվածության պակաս ունի, նրան պարզապես չեն սովորեցրել աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: ԿԱՊԿՈՒ երեխան իրավունք ունի հաճախել իր բնակության վայրի դպրոց և ստանալ կրթություն: Անտեղյակության և գիտելիքների պակասի ֆոնին ուսուցիչը հարց է բարձրացնում. «Ինչու՞ պետք է ինքը սովորեցնի ԿԱՊԿՈՒ երեխաներին», կամ. «Եթե ես կատարեմ մի աշխատանք, որին պատրաստ չեմ, ինչպե՞ս դա կազդի իմ աշխատանքի որակի վրա»: Ուսուցիչները շատ աչալուրջ են վերաբերվում իրենց արդյունքներին, և նրանց նաև հետաքրքրում է, թե ինչ կստանան դրա դիմաց: Այստեղ առաջանում է մոտիվացիայի հարցը՝ ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին(Ֆինասական): Պետք է ֆինանսավորմամբ լուծել տարածաշրջանային խնդիրները, որպեսզի այն դասարանում, որտեղ երկու-երեք ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, ուսուցիչը հավելավճար ստանա: Մեզ դպրոցական խորհուրդ է պետք, որը կօգնի ուսուցչին: Քանի որ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկումը դասապրոցեսին կկրի ձևական բնույթ, այսինքն երեխան ֆիզիկապես դասասենյակում է, բայց նա որևէ կերպ ներառված չէ համատեղ գործունեության մեջ, չի մասնակցում դասին, պարզապես չի ստանում իրեն հասանելի կրթությունը: Նման կրթությունը ներառական չէ:

Եթե դպրոցում բազմամասնագիտական թիմ չկա, ուսուցիչը մնում է մենակ, վախ է առաջանում՝ ի՞նչ անել, ինչպե՞ս սովորեցնել: Ուսուցիչը կամ հանձնվում է, կամ սկսում է սովորել: Նախկինում ուսուցիչները հաճախ պարզապես լքում էին դպրոցը: Հիմա սա այլևս տարբերակ չէ: Օրենքը պարտադրում է, պետք է հասկանալ, եթե ցանկանում է ուսուցիչը աշխատել իր մասնագիտությամբ, ապա պետք է սովորի



աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: Պետք է շփվել ծնողների հետ ու հասկանալ, թե ինչ մոտեցում է պետք երեխային:

Ուսուցիչը պետք է մասնագիտական թեստ հանձնի, նոր բաներ սովորի: Եվ պարզ է, որ խնդիրը միայն աշխատավարձի բարձրացումը չէ, դա ոչ միայն նոր գիտելիքների, այլև բարոյական նոր արժեքների, մասնագիտական նոր նպատակների ձեռքբերում է: Ուսուցիչը հիմնական մարդն է, ով մեր կրթությունը դարձնում է կա՛մ ներառական, կամ ոչ, քանի որ ներառական կրթությունը ոչ թե քաղաքական խնդիր է, այլ առաջին հերթին մանկավարժական: Ուսուցչից շատ բան է կախված՝ հոգեկան վիճակից մինչև նրա գիտելիքները: Այսօր շատ կազմակերպություններ ուսուցիչներին նախապատրաստում են ներառման, ներառական դաս կառուցելու համար՝ կրթական զարգացման հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ:

Կարևոր է ուսուցչի պատրաստակամության երեք հիմնական բաղադրիչ.

ԱՌԱՋԻՆ - Իմանա երեխայի անհատական առանձնահատկությունները;

ԵՐԿՐՈՐԴ - Ընդունի այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա, կարողանա շփվել երեխայի հետ և ստեղծի իր հասակակից երեխաների հետ շփման ուղիներ:

ԵՐՐՈՐԴ կետը կապված է այն բանի հետ, թե ինչպես են աշխատում ծնողների հետ:

Յուրաքանչյուր հինգերորդ ծնող դժգոհ է իր երեխային կրթական գործընթացում չընդգրկելու իրավիճակից: Սակայն երեխային գործընթացում ընդգրկելու համար անհրաժեշտ է ծնողների և դպրոցի միասնական աշխատանքը, մշտական երկխոսությունը և շփումը: Փոխարենը հաճախ է ի հայտ գալիս կոնֆլիկտ, որը խանգարում է աշխատանքին: Նույնքան կարևոր է նաև ուսուցիչների զինել գիտելիքներով՝ ծնողների հետ աշխատելու և երեխաներին կրթական գործընթացում ընդգրկելու համար: Դպրոցի և ծնողների միջև առկա բացը, հարաբերությունների նկատմամբ անվստահությունը լրջորեն խախտում է ներառական գործընթացը:



Ներառումը ավելի հաճախ է քննադատվում, քան խոսվում է այն մասին, թե ինչպես և ինչու է դա կարևոր: Ներառումը պատմություն է ոչ թե ԿԱՊԿՈԻ, այլ բոլորիս մասին:

Դասը դառնում է ներառական, երբ ուսուցիչը կարողանում է կազմակերպել երեխաների համատեղ գործունեությունը, առաջադրանքներ տալ բոլորին և տեսնել բոլորին: Կարևոր է նաև, որ ուսուցիչը իմանա, թե ինչպես է ընթանում զարգացումը, և ոչ միայն տիրապետի առարկայական նյութին: Դպրոցում մենք ոչ միայն գիտելիք ենք փոխանցում, այլև երեխային սովորեցնում ենք ճիշտ վերաբերվել իրեն, ուրիշներին ու աշխարհին:

Հաջող ընդգրկման համար անհրաժեշտ են յուրաքանչյուր դպրոց ունենա բազմամասնագիտական թիմ՝ հոգեբաններ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ. մարդիկ, ովքեր հասկանում են և գիտեն ԿԱՊԿՈԻ երեխայի զարգացման առանձնահատկությունները, կարող են կազմել հոգեբանական աջակցության ծրագիր և օգնել ուսուցչին գտնել ճիշտ մոտեցում աշակերտին դասավանդելու հարցում. Ուսուցիչների մոտ 90%-ը կարիք ունի մասնագետների աջակցության: Յուրաքանչյուր դպրոցում ուսուցիչների համար կարևոր է քննարկում ունենալ ԿԱՊԿՈԻ երեխաների մասին, կիսվել փորձով և սովորել միմյանցից: Ներառման ռազմավարությունները քննարկելու լավ վայր է դպրոցի խորհուրդը:



Ի՞նչ մեթոդներ կիրառել առավել արդյունավետ ներառում կազմակերպելու համար առարկայական դասապրոցեսում և հատկապես՝ միջին դասարաններում

Պատմության դասապրոցեսին միջին դասարաններում ընդգրկված ԿԱՊԿՈՒ երեխաներին պետք է ապահովել առարկայի շրջանակներում նվազագույն գիտելիքներով՝ հենվելով.

ԱՌԱՋԻՆ - երեխայի անհատական առանձնահատկություններից

ԵՐԿՐՈՐԴ – ընդունել այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա, կարողանալ շփվել երեխայի հետ և ստեղծել իր հասակակից երեխաների հետ շփման ուղիներ՝ առարկայի դասաժամին:

ԵՐԿՐՈՐԴ – իրազեկված լինել ծնող-ԿԱՊԿՈՒ երեխա հարաբերություններից և ծնողի հետևողականության աստիճանից:

Առարկայից նվազագույն գիտելիքներ փոխանցելու համար նախ հարկավոր է ուսումնասիրել և ճանաչել ԿԱՊԿՈՒ երեխայի՝ նկատելի և ոչ նկատելի խնդիրները: ԿԱՊԿՈՒ երեխայի անհատական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար կարող ենք օգտվել՝ Ա. Բեջանյան, Վ. Պապոյն, Ա. Գալստյան «Երեխայի հոգեկան զարգացումը գնահատող դիագնոստիկ փաթեթ»-ից: Հիմնվելով երեխայի տարիքային զարգացման առանձնահատկությունների, ներկայումս կիրառվող մտավոր զարգացման թեստերի և չափորոշիչների վրա, կառանձնացնենք երեխայի հոգեկան զարգացման հիմնական բաղադրիչներ, որոնք են.




Նախ օրինակ 1. Դիագնոստիկ փաթեթից՝ միջին դասարանների, 11-14 տարեկանների համար

11-14 տարեկան

Երեխայի անուն _____, ազգանուն _____, ծննդյան
 օր, ամիս, տարի _____, սեռ _____ դպ./ /մանկ./
 N _____, անցկացրեց՝ ստորագրություն Ա/Ա _____

Կոգնիտիվ ոլորտ			
Տեղեկացվածություն			
Ո՞ր բանն է էապես տարբերվում մյուս երեք բաներից			
1.	*Արամ, *գոհար, *Կարեն, *Արմենակյան		
2.	Տեղադրիր 101,102,103և 104 հեռախոսահամարները ըստ նշանակության *Շտապ բժշկական օգնություն, *Գազի վթարային ծառայություն, *Հրշեջ ծառայություն, *Ոստիկանություն		
Ո՞ր բանն է էապես տարբերվում մյուս երեք բաներից			
3.	*Պայուսակ, *Ճամպրուկ, *Գիրք, *Դրամապանակ		
4.	*Ժամացույց, *ակնոց, *կշեռք, *ջերմաչափ		
5.	*Ջուր, *Քամի, *Ածուխ, *Խոտ		
Ժամանակի ընկալում			
Ո՞ր բանն է էապես տարբերվում մյուս երեք բաներից			
6.	*Րոպեկ, *Վարկյան, *Ժամ, *Տևողություն		
7.	*Միջօրե, *երեկո, *կեսօր, *առավոտ		
8.	*Այգ, *Լուսաբաց, *աղջամուղջ, *Արևածագ,		
9.	*Դար, *Հազարամյակ, *Կարեղարձ, *Տասնամյակ		
Տարածական ընկալում			
10.	Ազատ տողում քաղաքները դասավորիր Երևանից ըստ հեռավորության (ամենամոտից - ամենահեռուն) Թբիլիսի, Վանաձոր, Մոսկվա, Տոկիո		
11.	Դասավորիր առարկաները ըստ չափերի (մեծից-փոքր) Ուղղաթիռ, տիեզերանավ, ինքնաթիռ, օդապարիկ		

1. **Տրված պատկերների 4 խմբերից ո՞րը ամբողջացնելով կստանաք հետևյալ պատկերը.



1 	2
3 	4

3. **Տրված 6 եռյուսանիվալան պատկերներից կառուցիր նման պատկեր.



Պատմության առարկայի շրջանակներում ԿԱՊԿՈՒ երեխային կարող ենք գիտելիքներ փոխանցել հայտորոշիչ թեստերի միջոցով, ինչպես նաև ստուգել փոխանցված գիտելիքների ամրապնդման աստիճանը:

Նույն օրինակ 2

Դասարան – 6

Անուն, ազգանուն – Հակոբյան Հրաչյա

Առարկա – Հայոց պատմություն

Թեմա – Հայկական լեռնաշխարհը

Երեխայի խնդիրը – միջին ծանրության

1. Ի՞նչպես են օտարները անվանում մեր երկիրը:

- Արմենիա
- Վրաստան
- Ռուսաստան


2. Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը:

- Մոսկվա
- Գյումրի
- Երևան

3. Ո՞րն է Հայաստանի մայր գետը:

- Արաքս
- Արփա
- Ախուրյան

4. Ո՞րն է Հայաստանի դրոշը:





Տեսանյութերի դիտում՝ ֆիլմեր, մուլտֆիլմեր և այլն, օրինակ լսողության խանգարումներ ունեցող միջին դասարաններում ընդգրկված ԿԱՊԿՈՒ երեխաների համար «սուրդոթարգմանություն» ունեցող ֆիլմեր, մուլտֆիլմեր, լրատվական թողարկումներ և այլն:

Տեսողության խանգարումներ ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաների հետ պատմության դասը կարող ենք իրականացնել ձայնագրված օնլայն գրքերի միջոցով:

Ծնողների իրազեկվածության մակարդակը պարզելու և երեխա-ծնող հարաբերություններից տեղեկանալու համար կարող ենք տարվա սկզբին ծնողների համար կազմել հարցարան և տալ նրանց: Օրինակ՝

Նմուշ օրինակ 3

Հարցարան ծնողներին

1. Ի՞նչ է ներառական կրթությունը:
2. Ի՞նչ է տալիս ներառական կրթությունը երեխային:
3. Ի՞նչ առավելություն ունեն, այն ԿԱՊԿՈՒ երեխաները ովքեր հաճախում են մանկապարտեզ:
4. Գոհ ե՞ք, արդյո՞ք, Հայաստանում իրականացվող ներառական համակարգից:
5. Ինչպե՞ս կվերաբերվեք այն հանգամանքին, եթե ձեր երեխան հաճախի մանկապարտեզ ԿԱՊԿՈՒ երեխայի հետ միասին:
6. Ձեր կարծիքով մասնագետները որքանով են պատրաստ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքին:



Եզրակացություն

Այսպիսով ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կադապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ադամյան Հ.Ա., Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելներ. կրթական կարիքի գնահատման մի ձևից մյուսին անցնելու անհրաժեշտությունը, Խ.Աբովյանի անվ.ՀՊՄՀ, «Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները», միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, Եր.2015թ.,
2. Աշոտյան Ա. Ա., Աուտիզմ ունեցող երեխաների ուսուցման և դպրոցականներատման «կիրառական վարքային վերլուծության» մոդելը, Խ.Աբովյանի անվ.ՀՊՄՀ, «Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները», միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, Եր.2015թ.,
3. Ասատրյան Ն. Ռ. Ներառական կրթության կազմակերպման մեխանիզմները, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, «Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները», միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, Եր.2015թ.,
4. Ավագյան Ա.Վ. Ներառական կրթության արդի խնդիրները Հայաստանում, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդես, մաս 1, Եր. 2014թ.,
5. Կաֆյան Է.Մ., Զարգացման խնդիրներ ունեցող նախադպրոցականի ներառական ուսուցումն ու դաստիարակությունը բնույթն ու հեռանկարները Հայաստանում. Երևանի բժշկահոգեբանական գնահատման կենտրոնի տեղեկատու, Եր. 2009, 35-49 էջ
6. Կաֆյան Է.Մ., Նախադպրոցական հաստատություններում ներառական կրթության իրականացման հարցի մասին, Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան, «Ներառական կրթության հիմնախնդիրները»

հանրապետական գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության 25- ամյակին,
Գյումրի «Էլդորադո» հրատարակչություն 2017թ., 171 էջ, 66-70



7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք, 2014թ.
8. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում», Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013թ., էջ 56
9. Հովհաննիսյան Ա., Մանուկյան Լ. Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, Եր. 1999, Ջանգակ-97, 206 էջ